



Խ Մ Բ Ա Գ Ի Ա Կ Ա Ն

Անկասկած Ֆրանսացի իմաստասեր Տեքաթի «Կը խորհիմ ուրեմն կ'ապրիմ» խօսքը անկորնչելի ճշմարտութիւն մըն է, ու հիմա կանգնած Նոր Տարուան սեմին, կը տարուիմք այն մտածումէն՝ որ չծրագրուած ու չմտածուած ապրուած կեանք մը թերեւս կրնայ ըլլալ ամէն ինչ, սակայն ո՛չ երբեք իրա՛ւ կեանք:

Մարդուն իրա՛ւ կեանքը կը սկսի այն վայրկեանէն, երբ ան կը սկսի անդրադառնալ իր ինքնութեան, ու կը սկսի լրջօրէն խորհիլ ինքն իր մասին. ու որքան այդ գիտակցութիւնը խորանայ իր մէջ, ան աւելի լաւ ու յստակ կերպով ինքզինքն և ատոր համաձայն ալ կը գծէ իր կեանքի ճամբան: Ինքնաճանաչումը, «Ծանի՛ր զքեզ»ը, այսպէս ըսած, պարտի ըլլալ մարդուն բարոյական սկզբունքը: Հակառակ իր դիրքին և կեանքի պայմաններուն, Մարդը պարտի ճանչնալ ինքզինքն, գիտակցիլ իր կոչումին և անոր հետ առնչուած պարտականութիւններուն: Որովհետեւ չծրագրուած կեանք մը պիտի ըլլայ խաւարի մէջ խար-խափում մը լոկ:

Նայեցէք պատմութեան ու հոն պիտի տեսնէք թէ ժողովուրդներու և պետութիւններու կեանքին մէջ պատահած վերիվայրումները եղած են այն պահերը, ուր անոնց դեկավարները կորսնցուցած են իրենց բարոյական հակակշիռը, ու առիթ տուած են որ կիրքն ու նախապաշարումը սանձարձակ գործեն: Այսպիսի մարդոց համար կեանքը անցուած օրեր են, և ոչ թէ օգտագործուած և կամ իրապէս ապրուած օրեր: Ժամանակը օգտագործել պիտի նշանակէ տիեզերքի ծփումն յաիտենականութեան մաս կազմող և մարդուն սահմանուած ժամանակը վերածել օգտակար ու բարի ոյժի մը: Ժամանակը, սիրելի ընթերցողներ, այն կտաւն է, որուն վրայ մեզմէ իւրաքանչիւրը կը թողու նկար մը, պատկեր մը,

որ կը ներկայացնէ իր կեանքի և հոգիի պատմութիւնը:

Այս մտածումներով, ՄԻՈՆ իբրեւ պաշտօնաթերթ Առաքելական Ս. Աթոռոյս և թարգման՝ Չինուորեալ Միաբանութեան և Պատրիարք Սրբազան Հօր զգացումներուն, սրտանց կ'ողջունէ Ամանորով և Ս. Ծնունդով սկսող Նոր Կեանքը, քաջառողջութեան, խաղաղութեան և բարօրութեան լաւագոյն մաղթանքներ յղելով իր բաժանորդներուն և ընթերցողներուն, շնորհաւորելով զանոնք իբր սրտի և մտքի բարեկամներ այս Նուիրական Հաստատութեան:

ՄԻՈՆ սրտանց կը մաղթէ, որ 2016 տարին ու Ս. Ծննդեան տօնը շինիչ ու առողջ ներշնչումներ պարգեւեն մեր ժողովուրդին, մանաւանդ Միջին Արեւելքի մէջ տուայտող մեր ազգակիցներուն, որպէսզի կարենան տոկալ և յաղթահարել իրենց կեանքի ընկերային ահաւոր դժուարութիւնները, արհացած Աւետարանի ոգիով ու մեր Մայր Եկեղեցոյ սիրով, որովհետեւ անցնող ամբողջ դարերու ընթացքին մեր Մայր Եկեղեցին եղած է միակ անկապտելի երաշխիքը մեր գոյութեան և ինչու չէ՝ ազգապահպանման:

ՄԻՈՆ, իր հրատարակութեան առաջին օրէն իսկ աշխատած է ու պիտի շարունակէ աշխատիլ այս գիտակցութիւնը պայծառ ու յստակ պահելու իր ընթերցողներու սրտին ու մտքին մէջ, կարելի եղածին չափ օգտագործելով կարող աշխատակիցներու մշակած միութիւնը, որոնք այժմէական են և մանաւանդ անհրաժեշտ մեր պատմութեան, լեզուին ու հաւատքին: Նաեւ, ՄԻՈՆ պիտի փորձէ ըստ կարելոյն այս յօդուածներէն ոմանք տալ Անգլերէն լեզուով, մեր նոր սերունդին մատչելի դարձնելու համար:

ՄԻՈՆ գոհունակ սրտով կը յայտարարէ թէ հինգ տարիներու դադարէ ետք վերստին կեանքի կոչուած ըլլալը, քաջալերուած ու գնահատուած է կարգ մը բաժանորդներու կողմէ, որուն համար ալ խմբագրութիւնս իր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնէ, ու նաեւ սիրով կ'ընդունի և կը քաջալերէ կարծիքներն ու թելադրութիւնները բոլորին:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

Ն.Ա.Մ.